

յունական սովորութիւնք, գեխութիւնք եւ անառակութիւնք բնականաբար դիւրաւ մուտ կը գտնէին իրենց մէջ: Ինչպէս բնական է ազնուատոհմութեանց ամէն տեղ արհամարհ աչօք նայիլ հասարակ ժողովրդեան վրայ եւ հարստահարել, նոյնը սովորաբար կ'ընէին հայոց նախարարք եւ ազատք: Վասնզի այդ երրորդ մասը՝ ժողովուրդը, որուն մէկ իրաւունքը չիշուիր մէկ տեղ մը, չի կար հաստատութիւն մը, որուն վրայ ինք յենուէր, չի կար կազմակերպեալ օրէնք մը, որ զինք պաշտպանէր. եթէ լիսեր եւս՝ ե՞րբ օրէնքը առանց զօրութեան կրցեր է մէկուն պաշտպանութիւն լինիլ. օրէնքներն ուժ ունենալու համար միշտ կազմակերպեալ մարմնոյ մը պէտք ունէին, եւ օրէնքներն արդար գործադրութեամբ միայն կրնան ժողովրդոց սիրելի լինել եւ իրենց սրտին մէջ տպաւորուիլ՝ սովորութիւն դառնալ: Հայաստանի օրէնսգիրքը բացի հոգեւոր գրեանքէ ուրիշ օրինաց տեղեկութիւն չունէին. Յուստինիանոսի օրէնքները գրեթէ վեց հարիւր տարի վերջ հայերէն թարգմատնութիւն ունեցան. ի՞նչ ուրեմն կը կառավարէր այս ժողովուրդը՝ սովորութիւնք եւ խղճմտանք: Վաղարշակայ օրէնքները իւր արթունեաց պերճութեան եւ նախարարաց գահույից համար կարգադրութիւնք էին, եւ քրիստոնեական կրօնքին հետ հրեութիւնը այնչափ ազնուացեր էր, որ Բագրատունիք, Ամատունիք, Գնթունիք հրեական ցեղերէ իջած կը համարուէին, որ շատ կարելի է թէ սխալ մը լինէր. Արծրունիք, Մամիկոնեանք, Կամսարականք օտարազգիք էին: Եւ այս նախարարները հայ ազգին տեսարէն էին իրենք ազատ եւ ժողովուրդն անազատ. նոյն յանցանքին համար կանոնագիրքն կը հրամայէր, որ քահանան եւ ազատը 100 դրամ տուժէ, իսկ անազատը 50 տուժէ՝ շատ մը ծեծ ուտէ, վասնզի ազատին մարմնական պատիժ արգիլուած էր, ուստի՞ց, — հաւանական թէ ի սովորութեանց:

Կային ժամանակներ ուր նախարարութեան ձեռքը այն աստիճան կը ծանրանար ժողովրդեան վրայ ոսկուոյ եւ արծաթի հարկապահանջներ դնելով, որ հեղինակ մը նմանցնէ այդ խեղճ շինականը այսինքն ժողովուրդը՝ «Մարդու, որ կրնկնի ի ծով եւ հնարք չի գտներ ելնելու» եւ «Հիւանդի, որ ցաւէն տագնապեալ խօսելու նաեւ կարողութիւն չունի»:

Ո՛վ որ լաւ դիտէ եւ ուսնի եւ դիմնայ խորհրդածել պատմութիւնը, կը տեսնէ թէ աշխարհագրական դիրքն էր պատճառ ինչպէս ոմանք կարծեցին նոր ժամանակներս, որ հայ ազգը կը տկարացներ թշնամեաց դէմ՝ կը բաժներ եւ անմիաբան կ'ընէր, այլ այդ նախարարական իշխանութիւնը, որ մեծ եւ պզտի բռնաւորյալութեանց բաժնելով երկիրը, կեդրոնական իշխանութիւնը կը տկարացներ, եւ այդ բռնաւորները գործիք կ'ընէր օտարին բանսարկութեանց եւ միջամտութեանց. ինչպէս հին ժամանակներէ ի վեր սխալ կարծիք մը կը տիրէ